

5. - ե. լեզուներից,, արված փոխառություններ /հմտ. խեթ.Labar-na, լատին. cisterna, caverna և այլն (Топоров, Прусская ЯЗЫК)/: Քացի այդ՝ նտարվոր է դարձնում ստուգաբանական հենքք քնդարձակել սլավոնական գուգահեոներով (Фасмер, ЭСРЯ):

Հայ. կափարումք բառը՝ վկայված միայն Կորյունի ,,Առ ի մէնջ հարքն ի կափարումս դարձան,, նախդասության մեջ ունի նույն իմաստը՝ ,,գերեզման,,: Դրան շեն հակասում այն տարրն-թերցումները, ուր կափարումք-ք կատարումք է դարձել:

Իմաստային նույնությունն ու բառակազմական կադազարի համեմատելիությունը նտարվորությունն են քնձեռում գուգադրելու հ. պրուս.caperne և հայ. կափարում-ք բառերը:

Կափարումք-ի ստուգաբանական հենքք հայտաձվում է Հր.Ամուռ-յանի Արմատական բառարանի բձախնդրորեն ներկայացված նյութի սահմաններում, երբ անկանխակալ ենք մոտենում այդ բառի միայն մի տեղ վկայված լինելու փաստին: Ինչպես վերջինի, այնպես էլ կափարք բառի շտուգաբանված մնալու պատմադք պետք է փնտրել դրանց հին ձխական բառաշերտին պատկանելու և կրոնական հեղա-շքըման հեռանքով գորձածությունից հեռուդականորեն դուրս մղվելու մեջ:

Կափարումք-ը ակնհայտորեն նույնարմատ է կափարիչ, կոպ/կոփ, բառերին, ինչպես նաև կափ,,հարված,, , կոփիչ , ,թակ,, և այլ բառերի:

,,գերեզման,, , ,խուփ,, , ,թակ,, , ,կիրք,, , ,հար-ված,, , ,60/իբրև ավարտուն, ամբողջական քանակ-ավարտ/,, և մի շարք այլ միևնույն cap արմատաձևին հանգող բառերի իմաստ-ների ներքին ադերսք /մոտիվացիան/ հայտաձվում է որոշակի ձի-սակատարության տարրերի մեկնաբանության հետ կապակցված: Այդ են վկայում ոչ միայն ցեղակից լեզուների նույնարմատ բառերի համապատասխան քնադրային ուսումնասիրությունները, այլև Հովհ. Սարկավազ իմաստասերի այն մի հատիկ նախդասությունը, ուր վկայված է ,,անհայտ,, կափարք բառը՝ ,,ձատիկնի, այսինքն՝ գղիոնիւսայ կափարսն և գործս իբր օրիւսօք հաստատեալ ունին,,:

Ա.Ք.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱԻ

ՇՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԱՀԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Շուներ հայ հին գրավոր և նոր բանավոր ավանդության մեջ

հանդես է գալիս իբրև չար հոգեառ՝ Առնակ կամ Առնակային շուկ, Առնակավոր շուկ անուններով /հին ասորերեն havnāgā - շնագայլ անունից/։ Առնակը գտնվում է Կինոպաս վուկի /հուն. kinopsis- շնաչյա, շնահայաց՝ վրեժխնդրության էրիններ դիցուհիներին տրամող մակդիր/ ծառայության ներքո։ Միջնադարյան հայրեններում առկա է ,Շնգլխիկ պոպիկ, պատկերացումը, իբրև կանանց վրիժառու պահպան, նման հունական շնահայաց էրիններին կամ շնագլուխ հեքիաթի դիցուհուն։

2. Հոգեառի կամ հոգիների ուղեկիցների շնակերպ պատկերացումն առկա է հին աշխարհի տարբեր ժողովուրդների ավանդույթյուններում, հատկապես հնդիրանական և արևմտյան հնդեվրոպական հավատալիքներում, դրսևորված նաև թաղման ու զոհաբերության ծիսակարգում։ Հնագիտական, հին գրավոր և նոր քանահյուսական նյութերի բազմաթիվ քննությունը բերում է այն համոզման, որ շների հնագույն թաղումներում ժամանակագրական և ծիսահավատալիքային երկու տարբեր տեսակետ, մեկը՝ շան, իբրև առանձին կենդանու զոհաբերություն, թաղման ծիսակարգից անկախ, մյուսը կապված թաղման արարողության հետ, իսկ երբեմն էլ առավել ուշ շրջանում այդ երկու ծիսակարգը հանդես են գալիս միմյանց խառնված։ Բոլոր դեպքերում շունը կայուն ձևով կապվում է մահվան պատկերացումներին, միայն ծիսահավատալիքային տարբեր ասպեկտներով զարգացած։

3. Հայկական հավատալիքներն ու ծիսական սովորույթները համեմատելով հնդիրանական, մասամբ և արևմտահնդեվրոպական աշխարհի համապատասխան տվյալների հետ, հնարավոր է դառնում վերակազմել հին հայոց մահվան առասպելաբանական քնկալումների մեջ շան ունեցած դերի առավել լրիվ ու ամբողջական պատկերը։ Ըստ այդմ, հայոց մահվան պատկերացումներում առկա է շան առասպելաբանական կերպարի ու գործելակերպի գրեթե նույն քնկալումը, ինչ հատուկ է հնդեվրոպական շատ ժողովուրդների ավանդությանը։ Բացի այդ՝ հին հայկական հավատալիքները վկայում են, որ շներին կամ շնակերպ էակներին /Արտավազդի շղթաները կրծող շներին, արալեզներին/ վերագրվել է նաև մեռելներին հարություն տալու հատկանիշ, երկնքի, երկրի և ստորերկրայքի միջև միջնորդի դեր, անգամ մարդկանց հացով ապահովելու կուլտուրաշեն ֆունկցիա, որ դարձյալ առնչվում է Արայի, իբրև հատիկային աստվածության հարության գաղափարին։